

72

LGA  
1145

11

1999

Հրատարակւած Վրացական Պարտիզանական



ՃԱՆԱՊԱՐՀ ՈՐԴԱԿԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏԻ ՅՈՎՀԱՆՋԱՆՆԱՆՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ ՄԻՆՁԵՒ Ի ՄՐԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐՈՔ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ ՄԻՆՉԵԻ Ի ՄՐԷՆ


ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏԻ ՅՈՎԷԱՆԶԱՆԵԱՆՅ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՅ ՄԻՆՉԵԻ Ի ՄՐԷՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐՈՔ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1885

107


С. П. ПЕТРОВ

1880

С. П. ПЕТРОВ


С. П. ПЕТРОВ

С. П. ПЕТРОВ




9 1195-10

28 1194



Ս. Կարապետ. Ս. Սառուածանին, Ս. Ստեփանոս. Ս. Սարգիս



Ս. Գեղգոր Լուսաւորից.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ ՄԻՆՉԵՒ Ի ՄՐԷՆ

ՆԻ ՎԵՐԱԴԱՐՁ

ՅՈՄՍԵԱՆ ՄԱՅԻՍԻ. 1884.

Ներկայ 1884 թուիս ապրիլի 26ին վերջ 'ի վերջոյ որոշուեցաւ իմ ուղեւորութիւնը, յատկապէս Գեր. Հ. Ղեւոնդ վարդապետ Ալիշանի մի փափագը լեցրնելու՝ դէպ 'ի Մրէն, Բաղրատունի թագաւորաց աշնանոցը, Խժկօնք և Շիրակ գաւառի մի քանի աւերակները, ըստ չափոյ կարողութեանս՝ հետազօտելու և լուսանկարով հանելու: Հեշտ է ուրեմն մակաբերել, որ իմ ծանրութիւնը բաւական մեծ պիտի լինէր. լուսանկարչական մեքենան, դեղորայք, գործիներ, և այլ ևս կենսական անհրաժեշտ պիտոյքներ հետս տանելով: Մի քանի օր էր՝ որ շարունակ տեղում էր յորդ անձրև. ճանապարհները խճուղի և կանոնաւոր չլինելու առթիւ՝ ծածկուած էին գրեթէ անանցանելի ցեխով, ուտոի և մեր նստած կառքի անիւները դառնալով՝ կարծես մի տեսակ հողի գունտեր էին կազմում: Առաւօտեան ժամը 10ին մենք անցանք այն քարայէն կամուրջի մօտով, որ կառուցուեցաւ 1879-80ի, և դեռին տապալե-

ցաւ 1883 թուի գարնանը, Արփաչայը բարձրանալիս:

Այաճա լերան ոչ այնքան սուր գագաթներն ծածկուած էին թանձր մեղով. քամին փչում էր հարաւից, իսկ կտոր-կտոր ամպերի ներքևից՝ երբեմն երբեմն ամօթխած հայուհու պէս՝ երեսը ցոյց տուող արեգակն՝ յանչափս շերմացընում և տաքացընում էր մեզ: Ինձ հետ ունէի լուսանկարչական արհեստին փոքր ինչ ծանօթ մի երիտասարդ, Սարգիս Սհարօնեանց անուշով:

Առաջին գիւղը, որ հանդիպեցանք մենք՝ պարսկաբնակ Ղարաքիչլիսաւն էր, որի կենդրոնում երևում են տակաւին աւերակ եկեղեցու քայքայուած բեկորներ, շրջապատուած հողի և քարի շեղջերով...: Հազիւ թէ մի քանի տասնեակ քայլափոխ հեռացել էինք, երբ ազմկալից շաչիւնով սկսեցին թափուել անձրևի խոշոր կաթիլները: Մեր նրստած կառքը ծածկուած չէր ոչնչով. իսկ քամու սաստկութիւնից՝ անհնարին էր բաց անել ամպհովանին. մի քանի

վայրկեաններէց յետոյ՝ մենք սաից մինչև գլուխ թըջուած էինք :

Կէս օրին ժամանեցինք պարսկաբընակ Արալը դիւղը, որի կենդրոնում եկեղեցու աննշան մնացորդի գագաթին բազմած արագիլը՝ կարծես Հայի բազըն էր արտասուլում . . . : Ժամը մէկին հասանք Քաշ — Շիրակեան, հնուամե Նրազգաւորս կամ Շիրակեան, կամ սարականների բնակած վայրում, ուր իբրև կիսակենդան վկայք՝ մնում են բերդի մասերը և մեծաչէն եկեղեցին, որ հիմնարկուած է եղել Սմբատ Ա. Բագրատունի թագաւորէն, Ս. Յովհաննէսի անունով, ուր և ինքը Գեորգ կաթողիկոսի ձեռք թաղաւոր է օծուել: Այս տաճարը թէ արտաբնու և թէ ներքուս թուխ և դորը կոխածոյ քարերով հաստատուած է. որոց վերայ կատարելագէս փայլում են ժամանակակից ճարտարագետի ճիւղն ու քանքարն. ունի զմայլեցուցիչ քանդակներ և մանուածքներ: Արտաքին կողմից հարաւային որմը 14 սաժեն և 2 արշեն (32 մեդր) երկարութիւն ունի, որի վերայ դասնվում են ութ պատուհաններ, և եկեղեցու մուտքը: Այս որմի աջ և ձախ ծայրերում գրուած երկու երկու ըստ բաւականի մեծ կակ պատուհանները՝ ունին նուրբ և քանդակագործ շրջանակներ, որոց մօտ գրուած են և որմնասիւնների լայն և եռանկիւնաձև խորշեր, որոց աղեղնաձև գազաթները ունին ճառագայթանման փորուածքներ: Պատի կենդրոնում բացուած է քառակուսի դուռը, որի ճակատին՝ երեք միատեսակ կտրակ և գալարուն քանդակներով մի ահագին քարկայ գրուած, իբրև դրան կամարն: Սորա բարձրում նկատելի է մի մեծ և բոլորչի ուսուցիչ քանդակ վարդի նըմանութիւնով. իսկ գորա բարձրից տեղ տեղ միայն երևում են մանեկաձև կամ մարի փշրուած քանդակները: Գրան երկու կողմերում ևս նոյնպիսի քանդակագործ շրջանակներով դասնվում են զոյգ մանրիկ պատուհաններ: Ուղիւ գրան բարձրը, կենդրոնում, գը-

տանվում է մի քառակոթ խաչ, որի չորս թևերի վերին մասերը աւելի լայն են, մանր խորշերով և գեղեցիկ ծաղկանկար քանդակներով. իսկ մէջ տեղը ներկայացնում է մի զարդարուն բուրբակ, գալարուն և սրանկիւն շերտերով: Այս խաչարձանի աջ և ձախ կողմերում գրուած են քառակուսի շրջանակներով երկու նեղ և երկար պատուհաններ. սոցա փորուածքները միմեանց յար և նման են. մանր և քառակուսի: Որմի վերայ՝ տեղ տեղ՝ նըկատելի են վերին մասի քանդակագործ պատկերի (գոռնիգ) շարունակութիւնը: Դոցա վերայից գրուած են ուրիշ որմեր, որով կարողացել են պատի դմբեթաձև վերին մասը հաւասարացնել ցած մասի հետ: Այս միջոցով նաև տեղական բնակիչները կարողացել են եկեղեցու մէջ ձեղունի վերայ ամրանալով պաշտպանուել թըջնամու արձակումներից: Ուրեմն դա եղել է և՛ ապաստանարան և՛ մարտկոց և՛ սրբութեան տաճար:

Սրեկեան որմը 7 1/2 սաժեն (16 մեդր) երկարութիւն ունի, երեք պատուհաններով, որոնց երկուսը պատի զոյգ ծայրերումն են, բազմաձալ և քանդակագործ շրջանակներով. երրորդը ուղիւ որմի մէջտեղումն է, որի քանդակները նուրբ են և մանր, քառակուսի և բազմախորշ: Սորա երկու կողմերովն էլ գրուած են որմնասեանց եռանկիւնաձև խորշերը, որոց գագաթները զարդարուած են նոյնպիսի գեղեցկանկար կամարներով: Թէ այդ խորշերը և թէ պատուհանները ծածկուած են այսօր մանր քարերով, որով և ստոր անզարգ գրութիւն ստացել և տգեղացել է: Հիւսիսային որմը յար և նման է հարաւայինին, նոյն չափով և զոյգ խորշերով, այն տարբերութեամբ միայն, որ այս կողմից եկեղեցին մուտք չունի: — Սրեմտեան պատը համանման է արևելեանին. սորա հանգէպ գըտանվում է քարաչէն մի բազմաստիճան սանդուղք, համարեա եկեղեցու բարձրութեամբ, որ մի ժամանակ տա-

նելիս է եղել Ս. Յովհաննէսի ձեզունը. իսկ սա այժմ մի բլրակի է նմաներ, կանաչ խոտով ու մամուռով ծածկուած: Չեզունը ամբարձած է չորս սիւների և վեց որմնասեանց վերայ, որի կաթողիկէն իսպառ կործանուած լինելով՝ նորա տեղը ծածկուած է փայտեայ տախտակներով: Այդոր ներքև լինում է ժամասացութիւնը: — Այս տաճարս թէ և ունի մի քանի կտոր արձանագրեր, սակայն նոքա ամէն ճշգրութեամբ Շիրակի տեղագրութեան մէջ զետեղուած լինելով, առաջ բերել այս տեղ ևս աւերորդ եմ համարում <sup>1</sup>:

Գիւղը դուս հայաբնակ է 80-90 տանից բաղկացած. դիրքը մի գեղեցիկ բարձրաւանդակի վերայ է. հողը բարեբեր է, օզը հովասուն, իսկ ջուրը սառն և առողջարար. դաշտերը ուղղվում են Ղարախանի գետակով:

Ես թէպէտ տրամադրուած էի նկարել այդ փառաչէն մենաստանը, բընական դիրքն ու վայրերը, սակայն եղանակի փոփոխականութիւնը առիթ եղաւ այդ աշխատութիւնը թողնել մեր վերագարձին:

Ժամը չորսին հասանք Աւուարխաւնս պարսկաբնակ գիւղը, որտեղից և հարկ էր անց կենալ Ղարս — չնայր, որ սաստիկ բարձրացած լինելով՝ անհնարին եղաւ անցնել կառքով. զիւղի պարսիկները բաւական թանգ գնահատութեամբ հաճեցան մի զոյգ գոմէշով սայլ լծել որի վերայ մի կանգունաչափ բարձրութեամբ տախտակներ ամրացրած, մեծ դժուարութեամբ կարողացան ազատել մեզ՝ կատարած գետի կլանող ալիքներից:

Ժամը վեցին մենք իջևանեցինք Երչաւի, կամ ինչպէս անուանում է Հ. Ղ. Վ. Ա. լիչանը իւր Շիրակի տեղագրութեան մէջ, Օձնառ գիւղում, տեղական միակ հայ Գրիգոր քեօխլի (քէհեա) տանը: Այս գիւղի դիրքը շատ վայելուչ է, ցածրկեկ բլրակների լանջերին գրուած. ունի սառն և մաքուր վտակ-

ներ, առատ մարգագետիններ, բերրի և արգաւանդ վարելահող. բնակիչները մծտաւորագէս 45 տուն Պարսիկներ են. դոցանից 40ը գաղթել են Երևանի նահանգից 1880-1881 թուականներին, և ինչպէս ասացի՝ մի տուն միայն Հայ կայ հիմայ. իսկ 1879 թուին այս գիւղը այցելած ժամանակս՝ 16 տուն Հայ բնակիչներ ունէր, իւրեանց երիտասարդ քահանայով. ես այն ժամանակ տեղական վեց տուն բնիկ սրիկայ Պարսիկների զազրալի արարմանց մասին՝ մի թղթակցութիւն գրած էի Մեղրաիւն, որով նախատեսում էի տեղական Հայ բնակչաց այս աւուր անմխիթար վիճակը. սակայն, ինչպէս երևում էր Մեծ Պ. Սիմեոնեանցի (Մեղուի խմբագրի) մասնաւոր նամակից, այդպիսին իրենից անկախ պատճառներով անկարող էր տպագրել, ուստի և յանձնուած էր ուր հարկն էր պատշաճաւոր անօրինութեան: Նոցա անվերջ բողոքները արգաստոր վախճան չունենալով, ի վերջոյ 1882 թուին ոչ յօժար կամ քով՝ փոխադրվում են Ղոչյուռձոչ աւանում աւերակի գիւղը, որը մի ժամանակ խօշալանքի սեփական կարուածքն է եղել: Իսկ Գրիգոր քեօխլին՝ թերևս իւր հոգու փրկութեան համար ամենայն հալածանք յանձն առած, քրիստոնէական եկեղեցւոյ պահպանութեան համար միայն չի շարժվում իւր տեղից. չնայելով որ նա այժմ գրկուած է նախ քան ուսու — թրքական պատերազմը իւր տիրած հողերից, և թերևս դուրս կը գնար այդ գիւղից այն ժամանակ միայն, երբ հոգեւոր իշխանութիւնը իսպառ քանդէր եկեղեցին . . . :

Հետևեալ տաւառեան չնայելով որ մասախուղը նոյնպէս պատել էր Երչաւն լինի, և կաթիլ կաթիլ թափվում էր անձրևն, մենք դժ սրտով դուրս գընացինք հիւրասէր շինականի սեմից: Ծաղիկների անուշահոտութիւնը, մանրիկ թռչունների դիւրեկան գայլայլիկները փարատում էին մեզ վերայ ծանրացած եղանակի անախորժ տղաւորութիւնը: Կամաց կամաց սկսան

1 Տես Տեղագրութիւն Շիրակայ, երես 8-11:

չքանալ մթին ամպերն, և արդէն տարածվում էին մեզ վերայ արեգակի թոյլ և դողդոջուն ճառագայթները: Մենք անցանք 1879 թուին հիմնարկուած հայաբնակ թաղա-քանակ անունով գիւղի կենդրոնից, որի անցեալը այնքան մօտ է, որ յիշատակութեան արժանի և ոչ ինչ չի պարունակում:

Բարձրանալով ճակատամարտների, մանաւանդ վերջին ուս-թրքական պատերազմի ժամանակ կուռող հակառակորդներին ապաստանարան դարձած՝ ինչ-քախա լեռների կրճքով, հեռուից հանդիպեցան մեր աչքերին Անիի հրաշակերտ բուրգերն և պարիսպները. նորա կիսականգուն և կիսաւեր տաճարները. իսկ մենք յափշտակուած այդ դողարիկ տեսարանով՝ մտածեցինք գիշերել Անիի՝ մեր սևաբաղդ և այրիացած մօր ծոցում. մի օր էլ զոհեցինք նորա ցանկալի տեսութեանը:

Անցանք հազար անգամ գրուած և խօսուած Առաջ դրան անցքով, որի հանդէպ բազմաթիւ բուրգերին կից՝ տակաւին անվիհներ կանգնած է Բազրատունեաց առիւծը, սակայն նորա թաթերը ջախջախուած են, աչքերը կուրացած, ատամները բթացած՝ շրջթան կրճեղով:

Ես տեսայ իմ վաղեմի բարեկամ, Գեր. Ներսէս վ. Տիգրանեանցն, ինչպէս և էր առաջ իւր վանահայրական պաշտօնի մէջ. Նա ամենայն սիրով և ուրախութեամբ հիւրընկալեց մեզ. խօսեցաւ մի քանի հետաքրքիր հարցերի և Անիի այս աւուր անտեսական անմխիթար վիճակի մասին. թէ և կառավարութիւնից արդէն յանձնուած էր մի հարիւր օրավար հող, սակայն նիւթական միջոցի անձուկ լինելը, հողի քարքարոտութիւնն և ջուր չունենալը կանոնաւոր արդիւնք չէին խոստանում: Օր քստ օրէ նուազում էր Անիին այցելողների թիւը, որ գրեթէ միակ ագրիւրն էր նորա միաբանութեան պահպանութեանը, իսկ կողմնակի նպաստներ համարեալ երբեք չէին ստացվում:

Խեղճ Հայր սուրբը անցեալ 1883 թուին օրը ցերեկով թուրք աւազակներից թալանվելուց զինի<sup>1</sup>, այլ ևս անկարող էր շիտկել իրեն. նա այժմ մեծ դժուարութեամբ կարողանում էր հայթհայթել իւր օրական ապրուստը: Անիի միաբանութիւնը բաղկացած է մի քանի հոգւով, որ են՝ Հայր սուրբն, մի տաճիկ պահապան, և մի ծառայ իւր ընտանիքով:


Հետևեալ առաւօտուն վաղ՝ մեր կառքը ընթանում էր դէպ 'ի նպատակատեղին, դէպ 'ի խժկօնք. ճանապարհի կիսին հանդիպեցաւ մեզ Անիի գիւղացի Տաճիկ Մուխտարը (գիւղաւագ). նա զանազան անցքերի նկատմամբ երկար խօսեց, պատմեց Մաղաս-բերդի մտակայ անցեալը, որ իրօք արժանի էր ուշադրութեան. և դա նման էր այն նրկարագրութեանը, որ Հ. Ալիշան արժան էր համարել զեանդելու իւր «Շիրակի» 124 երեսում:

Տաճիկը նոյնպէս պատմեց՝ որ սորանից մի քանի տարիներ առաջ՝ իրենց Անի գիւղում դանուել է մի քառաթև խաչ, որ վաճառել են մի Տաշանդըլլադեցու՝ ութ բուրջիով այդ խաչը ձուլածոյ օսկի է եղել կէս արշին բարձրութեամբ. երբ քաղաքում քանդել են դորան, ներսից դուրս է եկել մի այլ խաչ փոքր դիրքով մեծ ակներով (եաղութի և դմբուխաթի քարերով), կրելով իւր վերայ նաև մի երկու շարք հայկական տառերի: Այդ խաչը, աւսում էր Տաճիկը, այժմ գտանվում է Ս. Էջմիածնում:


Կէս օրին մենք ժամանեցինք Տեկուս. ես պարտք համարեցի իմ ճանապարհորդութեան մասին յայտարարել տեղական սատիկանութեանը. որի ներկայացուցիչը, ազգով վրացի, յանչափքս ուրախացաւ, և պատրաստակաւ նութիւն յայտնեց հարկաւոր դէպքում օգնել ինձ՝ ձեռնարկած նկարչահանական գործում:

<sup>1</sup> Այդ առթիւ իմ մանրամասն գրութիւնը ստղուեցաւ «Մեղու Հայաստանի» լրագրում, 1883 թուականին:


Ս. Կարապետ եկեղեցի խժկօնից



Ս. Սարգիս եկեղեցի խժկօնից



Խ Օ Կ Օ Ե Բ



Սակաւ ինչ յետոյ՝ ձորակի ծայրում իմ աչքերի առջևն էին խճկօսից նախ Ս. Լուսաւորչի և ապա միւս սրբավայրերի կիսափուլ ծայրերը, շողշողում էր Ս. Սարգսի գեղեցիկ խաչը: Էս մըտայ գաւիթի շէմքով. տեսայ՝ որ նոյն համակրելի և սիրելի ծերուկ վանա-հայրը, նոյն Յարութիւն վարդապետ Մանուկեանը դարձեալ մուրճը ձեռին աշխատում էր անհանգիստ. ամէն մարդավայել հիւրասիրութեամբ ընդունեց նա մեզ, և յատկացրեց մի սե-նեակ լուսանկարչական գործիքների և այլ պիտոյից համար:

Ապրիլի 29ին առաւօտուն լողացանք այս կողմերում իւր փրկարար յատկութիւնով յայտնի. ոչ այնքան տաք հաւ-քայիւն ծծմբային — երկաթախառն ջը-րում, որ քարերով շրջապատուած մի հարթ և կանոնաւոր աւազան է, մե-նաստաններից մի վերստաչափ հեռաւորութեամբ, համանուն գետի (Խըծ-կօնք կամ Խծկօնից ջուր) եզրը, սեղ-մուած ձորակի մէջ:

Համբուրելով մեր նախնիքներից կանգնած Ժ — ԺՍ դարերում սրբազան քարերը, նկարեցինք մի միայն Սուրբ Ստեփանոսի մենաստանը, իւր տապա-նաքարերով, խաչվեմի պատուանդա-նով և հանգստարանաց բարձրում դը-րուած հովանոցների մնացորդներով: Ապրիլի 30ին սկսեցինք աշխատու-թիւնը. նկարեցինք մի քանի ճարտար-արուեստ քանդակներով և մանուածք-ներով հարուստ Տաճարները, սեպա-ցած Ժայռերը և անդնդախոր ձորակը:

Մայիսի 1ին ցուրտը և քամին այն-քան սաստիկ էր, որ ջրերը սառեցան թէ սենեակների մէջ և թէ դուրսը. սա մի տարօրինակ երևոյթ էր, որի ի-րականութեանը մենք ինքներս անգամ երկբայում էինք. և ո՞վ կարող էր մտա-ծել թէ մայիսի 1ին, Խծկօնից ձորա-կի մէջ, ուր բուրում էր ծաղկանց ա-նուշահոտութիւնը, բարձրացած կա-նաչը և ծառերի բողբոջները, որք ոչ միայն գարնան, այլ ամռան եղանակի արգասիք կարող էին համարուել, և

յանկարծ դռա բոլորը խամրեցան, թառամեցան և սևացան. ինձ հետ բո-լոր վանականներն էլ՝ այս երևոյթը բնութեան մի տեսակ խաչ կամ պատիժ էին համարում:

Մայիսի 2ը թէ և չփոխեց իւր կեր-պարանքը, — ցուրտ էր և քամի, — սա-կայն յաշողեցաւ ինձ ստուգել «Շի-րակի» մէջ զետեղուած Ս. Սարգսի արձանագրերը, և օրինակել այնպիսիք, որ թէ տեղի բարձրութեան և թէ ա-ղաւաղուած ու տեղ տեղ փշրուած լի-նելու պատճառաւ՝ ՚ի լոյս ընծայուած չեն տակաւին: Ահա այգպիսիք.

Ս. Աստուածածին. եկեղեցու հարաւային որմի ճակատին՝ զօտիաձև մա-կադրուած է չորս տող, որոց առաջին տողից հնարաւոր եղաւ ինձ կարգալ.

«Յանուն Աստուծոյ ի: ՆԾԵ: ԹՈՒՆԿԱ-նիս ... (երկրորդից) Էւ ազատեցի յ (վեց տառ փշրուած է) ն նեղութենէ յ Էւ հանեցի ... (երրորդ կարգից) տիւ եւ ամ (վեց տառից յետոյ, որ փշրուած է) տեսուն Ասա-նեայ Արշարունեայ Եպիսկոպոսին ... (չոր-րորդ տողից) ... տարեցի զան (6-7 տա-ռից յետոյ) ուժիւն վանացս եւ ազատեցի որ եղ աշ.....»

Այդ արձանագրութեան բարձրը, ոչ այնքան խոշոր տառերով, կարմիր քարի վերայ փորագրուած է հետևեալ յիշատակարանը.

«Ի Թուլիս ՈԿԲ ողորմութեամբն Աստու-ծոյ եւ Արդլմսեհ կրանակամս ..... Կոն-դերս\* դարբին տուաք զսա երկու դուռն տներ նոր ուխտս Խծկանից եւ սորա հաւ տատեցին զմե՛ծն շարաթն պատարագ ըզ-մինն Իգնատիոսի մին Յոհաննիսի մին հաւը տիկն ... եւ մին Կանդերոյն. որ զգրեալս խափանէ պատժեսցի ՚ի Տեսունէ»:

Սուրբ Սարգսի մօտ, խաչարձանի ճակատին թէ և կար 7 — 8 տող դը-րուածք, սակայն տառերի անկանոն, մամուակալած և աղաւաղուած լինելու առթիւ՝ կարգալ կամ օրինակել ինձ անհնարին եղաւ:

\* Թերևս լինի «Կանդերոյն», որ յիշուի և այլ անգամ փոքր մի յետոյ:

Եղանակն կանոնաւորուեցաւ և մենք սկսեցինք գործել: Օրինակեցի այս և այն այցելուներէից տաճարներն որմնրին մատարով, ածուխով և կաւիճով զրոյշմուած թէ չափածոյ և թէ ընդարձակ գրուածքները. որոնցից այս անգ ես առաջ եմ բերում մի քանիսը միայն.

« Եկեալ այս ուխտ սուրբ փառաւոր, Որ մեծ Հայոց է գործ շնորհ. Աչք յարտասուս համբոյր ետու. Սուրբ նշխարացս հուշակաւոր »:

ԱՂ. ԱՐԱՐԱՔԱՅԱՅ

Նկուղի դրան ճակատին 1883 թուա կանով.

« Չայն տնր աւերակ, ինչն շուն եւ, Ողբակից ինկ լիախա դժբաղդիս. Շարժեցէք զեփիտ ալիքը վիտ-վիտ, Խառնեցէք արտասուսս սրբ գրեցիս նետ »:

ԲԱՐՍԵՂ ՄԵԼԻՔ ԳՐԻԳՈՐԵԱՅ

Այսպիսի շատ գրուածքներ կարգաւորեց յետոյ, որպէս զի ես էլ մի բան ասած լինէի, ուսուցչիս՝ Պ. Ա. Արաբաջեանցի ստորագրութեան մօտ՝ գրեցի հետեւեալը.

« Գու, սրտաբեկ Հայ այցելու, կու լսաւ ղէկաւոր, վասն զի քո իսկական աչքերով տեսար, բերանով համբուրեցիր եւ ձեռքերով շօշափեցիր նախնեացդ փառաւոր անցեալի, նոցա առաքինութեան, Յշմարտաստուածպաշտութեան եւ մեծութեան հրաշակերտ կոթողներին ... Թող տիեզերք չար նախանձից շլացած՝ ուրանայ քո վաղեմի աշխարհակալութիւնը, մեծութիւնն ու փառքը, միմէ տքա կենդանի եւ խօսուն վկաներ չէն ... Գու, նախնեացդ արժանաւոր զաւակ, բուն հաւաքանքով միայն սահմանափակեցիր զգայուն սրտիդ խորհրդաւոր այլեծութիւնը, սակայն ...

Իմ հարցմանը թէ մնում էր տակաւին վանքում այն բուրվառը՝ որ զրոնուած էր Ս. Սարգսի արեւելեան զաւիպրի ներքեւ, Հայր սուրբը պատասխանեց, որ դա ինչպէս մի գեղեցիկ հնութիւն, պահպանում է իւր մօտ: Այդ բուրվառը բաւական հին է. գեղնադոյն թուծից (պղնձից) ձուլուած.

Իւր վերայ կրում է վիշապների և վագրների ուսուցչիկ արձաններ. ունի նաև այս արձանագիրը.

« Յիշատակ է Պահրամի որդոյ Անդանին ի դուռն Ածղալու սուրբ եկեղեցու »:

Ինձ այնպէս է թուում՝ թէ դա կուպաշական մեհեաններից անցնելով քրիստոնէական եկեղեցուն, (ինչպէս երևում է սկզբում չղթոյ չէ ունեցել) շատ յետոյ ընդունել է այդ մի շարք տառերը:

Մայիսի եօթը գեղեցիկ օր էր, շինջ և պարզ. ուստի և տեղական միաբան Յակովբ վ. Մուրատեանցի հետ, մեր գործիքներով, մեքենայով և դեղերով ծիլ-ծիլ ժայռերի կուրծքով՝ բարձրացանք Ագարակ կամ Ագրակ գիւղը, որ հազիւ 1 1/2 վերստ հեռաւորութիւն ունի խժկօնից ուխտէն: Այտ գիւղը յայտնի է իւր մի փառաշէն եկեղեցիով, որ կրում է Ս. Ստեփանոս Նախավկայի անունը. հիմնադրը յայտնի չէ, ունի արձանագրեր հայկական ՆԾԵ (1006 ֆրիստոսի) թուականից:

Մեր ջանքն՝ գէթ մի քանի կողմերից կանոնաւոր նկատարիչներ ստանալու, ապարդիւն եղան. զլիաւորապէս մութ սենեկին՝ անամնոց աղտեղութենէ և սաստիկ տաքութենէ առաջացած զուրբի պատճառով, ամբողջ 600 դրամ արծաթ (հեղուկ) փչացրած եմ՝ մի միայն նեղատիվ ստանալու համար. անիծելով մեր շինականաց որջերն ու դոմերը և անոնց գարշահոտութիւնը՝ մենք վերադարձանք ՚ի խժկօն:

Ագրակում թէ քահանան և թէ ուրիշ արժանահաւատ անձինք՝ մատնանիշ ըրին մի քանի հնաշէն փոքրաւոր կամ իսպառ կործանուած հայկական ամրոցներ և մարտկոցներ: Օրինակ, նոքա ասացին՝ որ իրենց գիւղի արեւելեան կողմը երկացող ժայռերի գագաթին, (ես ինքս ալ ականատես եմ եղել մի քանի անգամ), գրուած է Դամուշը-դարսն կամ Տէմիր գալէ. այս անունը՝ թերևս հայացընելով՝ Յարու թիւն վարդապետը կոչում է երկարի

Ռերդ. այս ամրոցի մասին մասնաւորապէս և խժկօնից, Ագրակու, Ալեմու, Տայլարի, Բագնայրի, Տեկուու և ուրիշ հնութեանց ընդհանրապէս, ես խօսել եմ 1881 թուին, Մոսկովայում հրատարակուող՝ Փարսու — Հայաստանի պատկերազարդ հանդիսի մէջ:

Ագրակու մօտ՝ նոքա արեւմտակողմը՝ կայ մի ուրիշ աւեր ամրոց, որ իւր իսկական (պատմական) անունը՝ կորուսած լինելով, ժողովրդից կոչվում է Ղարաձաղ կամ Գալէճիկ: Ասացին՝ որ գառլին մեծ քանակութեամբ նետի սլաքներ, թէ երկսայրի և թէ քառաթիւ, զեղին պղնձեայ և պողպատեայ, նա և հին դրամներ: Իրենց խօսքին իբրև ապացոյց, նոցանից մէկն ընծայեց ինձ 2 հատ պողպատեայ յիշեալ սլաքների տեսակներից:

Հին-Տեկուու բարձր լեռան գագաթին՝ տարածուած են հնագործան ամրոցի բեկորները, որ սովորաբար կոչվում է Տեկառու բերդ:

Մի և նոյն գիւղից երկու ժամու ճանապարհ հեռաւորութեամբ զէպ ՚ի աւրեմուտը է Շարք — օղլի Ղարս — դարս ամրոցը, կամ թերևս մարտկոցը, որի պարիսպները կան տակաւին կիսականգուն:

Այսօր լեռան կուրծքին կան քարերի մեծամեծ շեղջեր և հողի կոյտեր, որ ըստ անանդութեան՝ եղել է մի ժամանակ անսովի պատուար, և ՚ի Տաճիկ ժողովրդից ստացել է Խալաւ — օղլի Ղարս — դարս անունը. դա ընկնում է Ագրակից զէպ ՚ի հիւսիս-արեւելք երկու ժամու ճանապարհ հեռաւորութեամբ:

Նոյնքան հեռուն՝ ուրիշ քարածոյսերի գագաթին երևում են հեաքեր նշանաւոր պարսպապատ շինութեանց, որ անցեալ ժամանակների ռազմագիտական նկատմամբ՝ պէտք է ընդունել անզի ամրութեան, որ այսօր կոչվում է Ղարապետգեղեր:

Յիշեալ մարտկոցից հազիւ կէս վերստ հեռաւորութեամբ կայ մի այլ ամրոց, կիսաւեր շինութիւններով և

պարսպի մնացորդներով. դա կոչվում է Ղարաղրդ-դարսն (Սեւ աղլիկ փախչող կամ փախցընող):

Պարսախալու մի շէն բերդ է, ֆիւրդքնակիչներով, Ագրակ գիւղից մի ժամ հեռուն, զէպ ՚ի հարաւ, Էսաղուձա լեռան կուրծքին: Այդ լեռան միւս երեսին՝ զէպ ՚ի կաղզուան՝ գրուած է մի ուրիշ ամրոց, որ սովորաբար կոչվում է Աղձա — դարս (Սպիտակ — բերդ). կան տակաւին փոքրաւոր պարիսպները, ծեփուած սպիտակ դածով, որի առթիւ գոյց է թուրք բառիւ ստացած լինի վերջիշեալ անունը: Եթէ հնարաւոր լինէր՝ ես անկասկած կ'այցելէի այդ բարձր ամրոցներին ու մարտկոցներին, և առ հասարակ այն տեղերը՝ որոնք հեռու են մնացել մեր թէ պատմաբանների, թէ տեղագիրների և թէ հասարակ այցելուների տեսութիւնից ... Միթէ պատերազմների ասպարէզ դարձած Հայաստանն՝ իւր բերդերով և անսովի պատուարներով՝ նոյնքան հարուստ և երեւելի չէ եղել որքան և հոյակապ ճաճարներով ...

Աւարտելով մեր գործը խժկօնում, ես վանահօր համահաճութեամբ քանգել տուի այն նեղ և փոքրիկ պատը, որ վերջին ժամանակներումս շարելով՝ ծածկել են Ս. Սարգսի և մեծ խաչարձանի հանդիպակաց արձանագրերը, որոնք տակաւին օրինակուած չին ոչոքից: Ես կարողացայ ընդօրինակել մի այն Ս. Սարգսինը, որ բաղկացած է 21 տողից. իսկ խաչարձանի յիշատակարանը դուրս բերելու արգելք եղաւ այն հանգամանքը, որ պատի այդ կողմի մասը սաստիկ խարխարած լինելով, կարող էր տապալուիլ և փլատել ձուրակի բանջարանոցին ու պտղատու ծառերին:

Յանուն Աստուծոյ: ՈԿԳ: Թուականիս ես Գաւիթ որդի Գրիգորոյ զաւրալար ամիր սպասաւարին Չաքարիսի տեսի զպայծառութիւն սուրբ ուխտիս խժկանից ես եւ որդիք իմ և արագաւոր Գրիգոր եւ Գայլ Շերպարիք եւ Էտու զիմ զսէփական

գգիւղն գլխանանաճիղ \* զկէսն  
 ՚ի սուրբ Սարգիս յիշատակ ինձ եւ ճն  
 ողաց իմոց վասն որո հայրս Յովհան  
 նէս եւ վարդապետս եւ այլ միաբա  
 նքս հաստատեցին գլխաւծի գ  
 Յակոբա գՊաւոսի եւ գՊետրո  
 սի եւ զսուրբ Շողակաթին զպատարա  
 գն յամենայն ամի որ լինի յամ  
 ենայն եկեղեցիքս ինձ առնել ան  
 իսափան. էթէ որ հակառակի ի հար  
 անց կամ ի պատրոնաց եւ զիմ  
 գլխատակս իսափանէ, որչափ  
 Սստուած աւրինած է այնչափ այն մարդն  
 անիծեալ է:

Մի այլ արձանագիր՝ որ մնացած էր մթութեան մէջ Ս. Սստուածածին եկեղեցու խորանում, օրինակելով՝ ես հրատարակած եմ փարոս օրագրի մէջ, 1881 թուին:

Խոճկոնից ուխտը այժմ դրուած է շատ կանոնաւոր պայմանների մէջ. բարեխիղճ վանահօր, միաբանների և աշաւուրջ հոգաբարձուաց իրաւասութեան ներքեւ. հոգաբարձուք են արժանապատիւ Տէր Յովհաննէս քահանայ երեցեանցը՝ Տեկուում, Ազրակեցի Սահակ Տէր Յարութիւնեանցը և Ծպինցի Գեւորդ Դարբինեանցը. դռքա ընտրուած են Հայր սուրբի վանահայրութեան և Խոճկոնից նոր ՚ի նորոց կենդանութեան առաջին օրից, այսինքն 1878 թուից, և հաստատուած են այն ժամանակի թեմական առաջնորդի գրութիւնով:

Յարութիւն վարդապետը թէ և տարուօք փոքր (նա ծնել է 1830 թուին), սակայն սպիտակ մօրուքով մի պատկառելի անձնաւորութիւն է. խելացի, դորձունեայ և բարեպաշտ. ընդունել է կուսակրօնութիւն 1856 թուականին կտուց անապատում, վարդապետացել է 1863ի, տեղական Մարգար Եպիսկոպոսի ձեռամբ. 41 տարի եղել է այնտեղի և ապա 10 տարի Սևանայ միաբան: Տեղափոխուել է Խոճկոն, որ ամայի աւերակ և թափուր է եղել, համաձայն խնդրանաց հանգուցեալ հայալն գեներալ Յ. Լազարեանի 1878 թուակա-

\* Ղասուր փակագիր փորագրուած է, և կրնայ կարգացուել նաև ԵՂ կամ ԱԼ:

նին, բարեկարգել է եկեղեցին, մաքրել է բոլոր սրբավայրերը՝ անամոնոց աղտեղութիւններից և հողի ու քարի շեղջերից. դարձեալ, նոյնն նորոգեց փոքրաւեր տեղերը, հոսեցրեց սառը աղբիւրը, կանոնաւորեց հանքային ջրերը, և 2 1/2 վերստ տարածութեամբ ժայռոտ ճանապարհը, շինեց մի ջրաղաց, հիմք դրեց դպրոցի շինութեանը, պարսպով պատեց եկեղեցիքը, և ուխտաւորաց համար կառուց հինգ կանոնաւոր սենեակներ. դարգարեց Ս. Սարգիսը խաչկալով, գեղեցիկ ջահերով ու աշտանակներով, ուր հիմայ լինում է ժամասացութիւնն. իսկ արտաքուստ կաթողիկէն վերանորոգելով՝ կանգնեց փրկչական քառաթեւ խաչը, կանոնաւորեց կատարելագոյն ուխտի տնտեսական վիճակը: Ունի այնքան կաթնատու անասուններ և լծկան, որքան կարող էր ունենալ մի հարուստ գիւղացի ընտանիք, և այդ բոլորը նա արեց մասնաւորապէս Աղեքսանդրապոլ քաղաքի հայ հասարակութեան օժանդակութեամբ:

Յակովբ վարդ. Մուրադեանը փոխադրուել է այստեղ վասպուրականի աշխարհից 1884 թուականին, վարդապետացել է 1857 թուին. չափազանց աշխատասէր մարդ է, գիտէ որմնադրութիւն, հիւանութիւն և ամենալաւ պարտիզպանութիւն. առաւօտեան արշալոյսի հետ մինչև երեկոյ նա աշխատում է անվերջ և անդադրում:

Յակոբ վարդապետը յաջողակ ձայն ունի, և քաջահմուտ է մեր եկեղեցական եղանակներին և երգեցողութեան:

Ի դէպ է յիշել որ Խոճկոնից ուխտին ուսու բարեխնամ կառավարութիւնից յատկացուած է 250 օրավար հող. որի առթիւ գլխաւոր կառավարութեան կանցելեարիայից՝ ՚ի 18 օգոստոսի 1883 (թիւ 628) յայտարարուած է Գրիգորիոս Եպ. Աղուանեանցին:

Մայիսի 8ին բարձրացանք Ղալաձուղ ամրոցը, որ դրուած է վիթխարի ժայռերի բարձրում. ուր մեծաչէն տնեքի բեկորները, պարիսպների մասերն

ու հետքերը կենդանի ապացոյց են այն երևոյթին, թէ այդ տեղ բնակուել և պատասպարուել են եղել մի ժամանակ, զէթ իմ կարծիքով, աւելի քան 400 տուն բնակիչներ: Գիւղի կամ բերդի արևմտեան կողմում գեղեցիկ հովտի վերայ տարածուած են շատ ննջեցեալների տապանաբարեր, որոց վերայի խաչարձանները կամ փշրուած են սըրբապիղծ ձեռքերից, կամ գետին են տապալուած ու հողի ուսոյցների տակ թաղուած:

Սյր օրը՝ կէս օրից յետոյ՝ մենք թողնք Խոճկոնը և մի ժամից արդէն Տեկու գիւղումն էինք, ուր մտաբերելով Ազրակ գիւղի անցքը, գարշահոտութիւնից զզացած մեր վնասը, որոշեցինք գիշերել մեր սեպհական վրանի տակ, եկեղեցու հանդէպ, կանաչ մարգագետնի վերայ: Սյս երևոյթը ցաւ էր եղել մանաւանդ գիւղաւազին. սակայն հասկանալով որ ես հարկադրուած էի այդպէս անելու, նորա իրենց ճոխ սեղաններով հիւրասիրեցին մեզ, որոնք իրօք մի տեսակ ապացոյց և գրաւական էին այդ ժողովրդի հիւրասիրութեան և մարգավարութեանը:

Երեկոյեան՝ իւր կոչմանը բոլորովին արժանաւոր՝ սրտով և հոգով հայ, արժանապատիւ Յովհաննէս քահանայ երեցեանը, սպառազինուած վերջին տեսակի ընտիր հրազեններով, եկաւ մեզ հետ գիշերելու. զանազան կարևոր հարցերի նկատմամբ մենք խօսեցինք շատ երկար. ՚ի միջի այլոց նա տրտնջում էր թէ մինչև այսօր իւր տիրած Հին Տեկու գետինը, որ տրուած էր Ս. Երրորդութիւն վանքին՝ խոսքովանոյշ Հայոց թաղուհուց, և վերահաստատուած է Աշոտ Շահանշահից, մի քանի շահասէր կառավարիչներ՝ յանձնել են Եզիտիներին բնակութեան, զրկելով եկեղեցին իւր դարաւոր իրաւունքներից. . . . խեղճ քահանան արտասվում էր մասնաւորապէս Սահակ կամաւարականից կանգնուած հրաշալիւր եկեղեցու սգալի վիճակը. նա՛ ինչպէս լսեցի ուրիշներից, իւր բոլոր

ճիգերը չէ զրացել թափելու այդ երջանկայիշատակ նախնիքների թանգագին և սրբազան աւանդը, եթէ ոչ աւելի փառաւոր կացուցանելու, այլ զէթ անխախտ պահելու և ապագայ սերունդեան ձեռքը յանձնելու համար. որովհետև Տէր հօր ունեցած օրինաւոր կառուածագրերը յափշտակուած են 1877 և 1878ի ուսու - թրքական պատերազմի ժամանակ սրիկաներից. ուստի և բաւական չհամարելով շրջապատող հասարակութեանց օրինաւոր վաւերացումը, խնդրեց ինձ բերել տալ Տաճկաստանից Հայրենիք լրագրի այն համարը՝ որի մէջ գետեղուած է Սուլդան Սրգիւլ - Ազիզի հրովարտակը, ընդհանրապէս յետս խել այն բոլոր եկեղեցապատկան հողերն ու կալուածքները, որոնք անցել են ուրիշ տիրողների ձեռք և ճանաչել նոցա (եկեղեցեաց) իբրև յաւիտենական սեպհականութիւն: Սյր խաւուած Սրբազան Երեսիտի միջնորդութեան որոշումով, և եղել է նուա՛յն իրարբութեան լուկրբում:

Տէր հայր վանքի՛, որ շարաշար և միանգամայն անտանելի տանջանքով այդ օրը ես բարձրացած եմ եղել Ղալաձուղ ամրոցը, պատմեց՝ որ աւանդութեամբ խօսվում է թէ ժէ դարում, երբ այդ բերդի հարսուները և գեւառահաս աղջիկները արծաթեայ կօշիկներով (նայլն) գնալիս են եղել Խոճկոնք ուխտ, հանդիպել է նոցա մի պարսիկ արշաւող խան, որ բռնութեան ժանր կապանքների տակ գերի է տարել Պարսկաստան:

Նա պատմեց նոյնպէս Խոճկոնից ուխտի վանահօր (թերևս վերոյգրեալ անցքին ժամանակ) Յովհաննէս վարդապետի հերոսական սխրագործութիւնը. որ երբ պարսիկ սրիկաները յափշտակել են վանքը, այդ վարդապետը միայնակ գնացել է նոցա շաւղով Հին Տեկուում, սկսուել է նորա և աւազակների մէջ ճակատամարտը. Յովհաննէս վարդապետը սպանել է 10 - 12 մարդ ու խլել է աւարը. որի առ-

Թիւ և ժողովուրդը յատկացրել է նուրան Բեալլաճի ( գլխատող ) անունը, թէ և վերջում ինքն ևս գլխատում է սրիկաներից :

Առաւօտեան այցելելով Ս . Երրորդութիւն եկեղեցին, ես նկատեցի՝ որ այս երկու երեք տարւոյ ընթացքում կատարեալ խարխարուել և բացուել է անհետացել էր՝ 'ի միջի այլոց՝ նաև կիսարձանը, որ պէտք էր երջանկայիշաւտակ հիմնադրի՝ Սահակ Կամսարականինը կարծել, և որ ղետեղուած էր արևմտեան որմի վերայ, երկու նեղ լուսամուտներին կից թռչնոց արձանների տակ : Սրգեօք քանի քանի այդպիսի ընտիր և պատուական արձաններ ու յիշատակարաններ փշրուել ու անհետացել են, այդ՝ բոլորից մտաբացուած՝ անպաշտպան սրբավայրերից . . . :

Նկարեցինք վանքը բոլոր կողմերից, հիանալի է այդ Տաճարի հիւսիսային որմը : նա ընտիր է իւր սճով, նուրբ քանդակներով ու մանուածքներով : այդ տեղ կատարեցապէս փայլում են հայ ճարտարապետի երկնատուր ձիրքերը : Մինչ մենք պատրաստուէինք հեռանալու Տեկուից և վայելում էինք Տէր հօր պարզ և ընտիր կաթնեղէն կերակուրներով հարուստ սեղանը, սկսուեցաւ սաստիկ քամին, և չորս կտոր մեր նեպատիվներից ( Տեկուի ) որ զրել էինք չորանալու, վայր ընկան և փշրուեցան . մեզ մօտ մնաց միայն մի տեսարան արևելեան կողմի <sup>1</sup> :

Մալրակում իջեանեցինք իմ վաղեմի ծանօթ Սուգիա - Սթօյի տունը, որ մի պարզ շինական է, հասկացող և ժողովրդի մէջ հեղինակութիւն ունեցող մի երիտասարդ . ես վստահ նորա բարեսրտութեան վերայ՝ խնդրեցի ուղեկցել մեզ հետ Մրէն, որի շրջակայքում լի են սրիկաների բոյներ, ֆիւրդերի վրաններ, և քիչ մտրդով մնալը սաստիկ երկիւղալի է . . . : Մրենում մեզ հետ էին չորս Մավրակեցի սպառազիւնուած կտրիճ պահապաններ : Մուռ .

ցայ յիշել, որ Սուգիա Սթօյի սենեակի մէջ, տախտակամածի բարձրը՝ շարւած էին մի շարք սրբաստաշ քարեր, տեղ տեղ հայկական տառերով . որ աղաւաղուած լինելով, հազիւ թէ ինձ հնարաւոր եղաւ կարդալ այսքանը .

« Ես Նանա բատս . . . խաչս . . . »

Իմ նախատանայր՝ թէ ինչպէս չէին խղճահարուել նորա ձեռնամուխ լինելու մի այդպիսի սուկալի սրբապղծութեան, Սթօն ինձ պատասխանեց, որ թէպէտ դուք պատկանում են Մրենի եկեղեցուն կամ ուրիշ շինութեանցը, սակայն այս տեղ փոխադրել են ֆիւրդ Մախսուդ - աղայի ապարանքից, որ այրուեցաւ ուս պատերազմող զինուորներից : Դա մի տեսակ ցեղ էր Մրենի աւերակներին . թէ և բոլոր ջանքը դործագրեց կաթողիկէ եկեղեցին ևս գեաին տապալելու, սակայն նորա հաստակաւոյց և ամուր որմերը մինչև յաղթութիւն մաքառեցին կործանող ձեռքերի դէմ :

Իմ որոշումը երթալու Բագրան այս տեղից, կանոնաւոր ճանապարհ չլինելու՝ ակամայից փոխուեցաւ :

Մալրակը մի բաւական մեծ գիւղ է . խժկօնից գետակի եզրը փոքրիկ ձորակի մէջ դրուած . հայաբնակ է, աղքատ եկեղեցիով, և թող ներուի ինձ ասել . . . պարտք եմ համարում հրաւիրել Ս . Սինօզի ուշադրութիւնը քահանայի մասին :

Հինգ - վեց ժամից յետոյ, քարքարոտ ճանապարհը պարզեց մեր առաջ Մրենի այգետեղերը, ապարանքների մնացորդները և գեղեցկաչէն կաթողիկէ եկեղեցին, որի մասին մանրամասն կերպով ես խօսել եմ՝ Մեղու Հայաստանի լրագրի 143 և 146 թուերում, 1881 տարւոյ :

Մրենում՝ ինչպէս ժողովուրդն ասում է, կրակ էր թափւում երկնքից . մենք հազիւ թէ ընկանք կաթողիկէ եկեղեցին, որ այգիների և շինութեանց կեն-

1 Երան. Տպ. Գանի մի տեսարանը Տեկուի գաւառին 'ի Տեղաբնութեան Շիրակայ, էջ 131-134 :

դրանումն է, քաղաքի բարձր ծայրերից մի ժամ հեռավորութեամբ. (Տես Դ Տախտակ) : Իրիկնադէմին ես օրինակեցի արևմտեան որմի երեք շարքից բաղկացած խոշոր արձանագիրը, որ վերանորոգելու ժամանակ գրերի երկու ծայրերում և մէջտեղում խաչ արձաններ ու պատուհան են դրել: Ահա այդպիսին .

... որդի Հերակլի բարեյաղմոզ Թագաւորի (եւ իջ) խանութեան (խաչարձանով կարկատուած է) մնագով պատրիկի կուրապաղատ ... իս պարկ ... ոց եւ Ասորոց եւ յեպիսկոպոսութեանն սրբա (կարկատուած է) ոկի (կաւ ովի) իղոսի եւ ի տանուտէրութեանն եւ սե ... կայ եւ Աշարունեաց տեառն շինեցաւ սուրբ եկեղեց (կարկատուել) ու թիւն կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենա ... :

Հետեւեալ ութ հատ Շիրակում գետեղուած արձանագրերը իսկականներն հետ ստուգելուց յետոյ, որ առ հասարակ բաւական ճիշդ էին լինում, սկսեցինք նկարել. բայց աւերակների կաթողիկէից հետո լինելը, (մենք գետեղուած էինք կաթողիկէ եկեղեցու խորանում), և տօթագին եղանակը կատարեալ արդելք էին մեր գործի յաջողութեանը. շատ մեծ դժուարութեամբ նկարեցինք մեծաչէն ապարանքի քանդակագործ դուռը, որ ըստ Հայր Ալիշանի, թուի լինել բնական Դաւթայ Սահառունոյ, կաթողիկէն շինող և Մրենի տիրոջ. (Տես Զ Տախտակ) : Դորա ճակատին փորագրուած է չորս տող արձանագիր՝ Զ թ թուականով. մնացածը տեղի բարձրութեան առթիւ մնաց անընթեռնի, թէ և կարելի էր կարգաւ տեղ տեղ միայն, ու այն ալ մեծ դժուարութեամբ. ինչպէս կային այս խօսքերը.


... Իմոց Աստուած շնամաւոր արացե յաւիտեանս գաւակաց ... » :

Դորա հանդէպ է փոքրիկ խորանը, երեք դռնով և նոյնքան նեղ և ոչ այնքան երկար՝ պատուհաններով. կար-

միր կոծածոյ քարով և նուրբ ու վայելուչ քանդակներով զարդարուած. դուրս արևմտեան դրան շրջանակի հետ պտոյտ է տրուած, իւր տեսակով, գէթ իմ աչքում, իւր նրբութեամբ և քանդակի մաքրութեամբ իմ տեսած բոլոր արձանագրերին գերազանցողը, Զ Ի Զ թուականով. որով մի սնն Մխ. (Մխիթար) անունով վարդապետ, Տէր Յակորի հայրապետութեան և լեւոնի թագաւորութեան ու Սահմախի պարսնութեան ժամանակ, յիշում է՝ որ այլոյ օգնականութեամբ վերակառուցել է այդ խորանը. — Դորանից սակաւինչ հետո, կայ մի ուրիշ ընտիր խաչարձաններով ու մանրիկ քանդակներով հաստատուած, ըստ երևութիւն հրաշակերտ շինութեան մնացուածք, (Տախտակ Զ) : Մի այլ քանդակագործ շինութիւն, որ յար և նման էր վերոյգրեալ խորանին, ոչ թէ բնութեան և ժամանակի հարուածներից, այլ անսիրտ հրէշների սրածայր մուրճերի ներքև կիսաչափ անհետացել և քոյքսպւել է : Գուցէ դորա խաչանիշ քարերը փերդ Բեգի կամ Աղայի սալայատակներն ու որմերն են կազմում. . . : Այս օր Մրենից հազարաւոր տապանաքարեր, ով դիտէ ինչպիսի պատմական յիշատակութիւններով հարուստ, այլազգեաց ամբողջ գիւղեր են կառուցել . . . : Ես գտնէ ականատես եղայ որ գերեզմանաքարերը խախտած իրենց իսկական տեղերից՝ կամ տարել են և կամ մնում է ուղտապանի երևալուն, որ փոխադրուին օտար բնակարաններ . . . :


Հրաշալի տեսարաններ են պատկերացնում այս տեղից՝ նաև սպիտակ հարսնութեան քօղը երեսին առած՝ Մայր - Այրաբաթը, որ արշալոյսի և վերջալոյսի ժամանակ զլուխ խօնարհած՝ կարծես խորհրդաւոր կերպով ողջունում է Հայաստանի նուիրական վայրերին . . . : Արևելքում՝ կանգնած է սպիտակահեր Արագածը, արևմտեան հիւսիսում՝ Եղբուճա լեռը, արևմտեան հարաւում՝ կողբի շղթայակալ լեռները և սեպացած Բեռն - օղլի

Գ



Արձանագիր յորմն Ս. Սարգիս եկեղեցւոյ

Բ Ն Ո Ն Գ



Խաչարձան ի Թեփոսս

ժայռը, արևելեան հիւսիսում՝ Ալա-  
ճան, և այլն: Տօթի անտաներու թեան  
հետ ջրի պակասութիւնը, (չուրը բեր-  
վում է Բագարանի ձորից, աւելի քան  
մէկ ժամու ճանապարհ հեռու Մրենից),  
կարիճների նշանաւոր քանակութիւնը,  
օձերի բազմութիւնը և մեր առողջու-  
թեան խախտուիլը՝ պատճառ եղան,  
ոչ միայն շարունակելու աշխատու-  
թիւնը, այլ և խոչընդոտն եղան Բա-  
գարան աւանին այցելելու. սակայն ես  
մտամբ յազեցուցի իմ այգւլիսի ծա-  
րաւը՝ Մրենի սահմանադիւրից, ծիւծիւ  
ժայռերի գաղաթից, որոց ներքեից՝  
ձորակի միջով՝ աղմկալից շառաչմամբ  
հոսում են՝ ալ կողմից (արևելքից) Ա-  
խուրեան գետը, և արևմուտքից՝ Խծկո-  
նից անուշահամ առուակը խառնվում  
են միմեանց՝ երասխի ծոցը թափուե-  
լու. այդ տեղ Ղըզ-դալասի (Աղ-  
ջկայ Բերդ) կոչուած ամրոցից, որ հի-  
մնայտակ կործանուած է, երևում են  
հեռուն՝ ձորի խորը խորշերում, Բա-  
գարանի այգեաց շարունակութիւնը,  
նոցա մենաստանների խարխուլ դրմ-  
բէթները, որոց հիմքերը մի ժամանակ  
ծառայել են կռապաշտական մեհեան-  
ների, որոց մէջ՝ նախ քան ճշմարիտ  
աստուածապաշտութիւնը, բազմած են  
եղել ձուլածոյ կուռքերն, ունենալով ի-  
րենց առջև կրակով լի ատրուշաններ:

Գործերի այս կերպ անկանոն դա-  
սաւորուելը՝ հարկադրեցին մայրիսի  
13ին առաւօտեան վաղ, ժամը հնգին  
դուրս գնալու այդ մի ժամանակուայ  
մարդաշատ քաղաքի արտասուալի փը-  
լատակներէից . . . :

Աւերորդ չէր յիշել նաև որ ներ-  
քուսա Մրենի կաթողիկէի որմնասեան  
ճակատին դրոշմուած կայ հայկական  
տասերով

«Տէր միրզասի գոգրան»

և դորա հանդէպ սեան վերայ դրոշմը-  
ւած է հետևեալը.

Թուրքի  
նէ Գով  
ամին

Վերջի բառն է Դովլաթ անունն:  
Իսկ այս արձանագրի ձախ կողմում  
քանդակուած է մի գեղեցիկ խաչ, իւր  
թևերի տակ ունենալով զոյգ սրեր.  
Իսկ բարձրում երկու պարսաքարերի  
նման ուռուցիկ արձաններ 1:

Մնտանելի նեղութիւնով հազիւ թէ  
մեր կառքը դուրս եկաւ բնակարաննե-  
րի փլատակներից և պարսպապատ այ-  
գետեղերից, որոնց առաջինները կա-  
րելի է հասցընել 600ի, իսկ վերջինները  
12 - 13 հազարի:

Կէս օրին մենք իջևանեցինք պարս-  
կարնակ Սլէմ կամ Ալաւան գիւղի  
հանդէպ կաթնահամ առուակի մօտ. և  
թէպէտ իմ ցանկութիւնն էր նկարել  
դորա փոքրաւեր եկեղեցին, որ հի-  
մնարկուած է եղել 637 թուականին,  
Սուրբ Անանիայի անունով, սակայն մա-  
քուր սենեակի բացակայութիւնը դար-  
ձեալ արգելք եղաւ, իսկ մեր ունեցած  
վրանով չափազանց դժուար էր, որով-  
հետև քթանի մանր ծակալքից լոյսը  
ներս էր թափանցում:

Անցանք Մաղաս - քերդի մօտով, ո-  
րի կանգուն բրդերն ու պարիսպները  
նկարելու անհնարին էր մեզ. այս տեղ  
չկար նաև կանոնաւոր ճանապարհ բըր-  
դաբնակ Մաղաս - բերդ գիւղը մտնե-  
լու: Չիանները սաստիկ յոգնած լի-  
ները, հեռեւոր և կառքի ծանր շար-  
ժուելը՝ հարկադրեցին ինձ այդ տեղից  
մինչև Անի հետի գնալու, երեք վերս-  
տաչափ, մի երկու մարդ օգնութեան  
ուղարկելու համար. գիշերը վրայ էր  
հասնում արծաթափայլ աստղերի ե-  
րևալու հետ. ես էլ մտայ սիրունիկ Ա-  
նիի փառաշէն պարիսպներու մէջ, ներ-  
սէս վարդապետէ հարկաւոր օգնու-  
թիւնը ստանալով. հազիւ թէ մի ժամ  
յետոյ՝ ինձ մօտ էր արդէն կառքը. սա-  
կայն անհաւատալի երևոյթ էր՝ որ  
կառքը իջնելով Ծաղկոցաձորի ժայ-  
ռոտ և ահագին զառիվայրը՝ մեր ա-

1 Ծան. Տպ. Մրենի այլ և այլ արձանագրու-  
թիւններն նշանակուած են 'ի Շիրակ, Էրես  
137-41. Իսկ եկեղեցւոյ ճակատն քանդակներն  
կ'երևին աստ 'ի Ե Տախտակի:

պակիքն ու շիշերը մնացել էին բոլորո-  
վին անջնաս: Ս.յս ճանապարհը ամե-  
նակարճ և ընտիրն է. եթէ Անիի հո-  
գաբարձութիւնը մասնաւորապէս հոգ  
ունենար այդպիսին հարթելու, աղա-  
տած կը լինէր Անիից այն կողմ անց  
կեցող աւերակաց այցելուներին, ա-  
ւելի քան 10 կամ 12 վերսա հեռաւոր  
պտոյտից. բայց հասարակական ընդ-  
հանուր օժանդակութիւնից զուրկ, Ս-  
լէմիածնի աչքից ընկած փլատակնե-  
րին, որ տեղից այդքան ճոխ միջոց-  
ներ, որ անհրաժեշտ պիտոյրները թու-  
ջած՝ ճանապարհների մասին մտա-  
ծէր. . . : Չորս օր մնացինք Անիում.  
բայց անվերջ քամին ու անձրևները  
բոլորովին խոչընդոտն եղան մեր գործի  
յաջողութեանը, այնպէս որ հազիւ թէ  
10 կամ 15 նեղատիղներ կարողացանք  
ստանալ:

Տեղացի Անի գիւղի թուրք Մօլլէն՝  
իմ խնդրանայ համաձայն բերեց այն  
աշտանակը՝ որ գտնուած է եղել ան-  
ցեալ տարի Պահլաւունեաց պաշտոնի  
մօտերից. մի ահագին կոյտ երկաթի և  
այլ հասարակ և բոտ մեծի մօտին խ-  
պառ ոչնչացած մետաղների հետ. այդ  
աշտանակը գէթ իմ աչքում այնքան  
հին չերեաց, որ կարելի լինէր մինչև  
Անիին ժամանակակից համարել, ուս-  
տի և աւելայքնելով դորա վերայ նորա  
թանգ գնահատութիւնը, ես 'ի հարկէ  
պէտք է հրաժարուէի վեր առնելուց:  
Աշտանակի երկարութիւնը գրեթէ մի  
արշին էր 1. դեղին պղնձից պա-  
տուանդանը՝ քրդական վահանի նման  
բոլորչի և ուռուցիկ էր. սինը դարա-  
րուն և կոպիտ, իւր ծայրին՝ մամի կա-  
թիլների համար ունենալով մի հատ  
ուլթ անկիւնի փոքրիկ ափսէ: Սմբողջ  
աշտանակը բաղկացած էր չորս առան-  
ձին մասերից:

Իմ ծանօթ տաճիկը մատոյց ինձ մի  
հատ քառակուսի - սրածայր նետի սը-  
լաք (պողպատեայ), որ գտնուած էր  
պարսպի ձեղքերից: Ի միջի այլոց՝ նո-

1 Իբր 0, 70 մեդրի:

քաշատ բաներ պատմեցին, թէ ինչպի-  
սի նշանաւոր սոկեայ և արծաթեայ զա-  
նազան անօթներ ու առարկաներ ան-  
ցել են իրենց ձեռքով, և ձուրվել քա-  
ղաքի սոկերայց բուրաններում: Փոքրիկ  
խաչեր, մետաղներ գանաղան տեսակ  
տառերով և քանդակներով, դեղեցիկ  
կոճակներ, մատանի, ապարանջան և  
այլն, գտնուելիս է եղել մի ժամանակ  
մեծ քանակութեամբ. որպիսիք՝ ինչ-  
պէս ասացի՝ վաճառել են նորա քա-  
ղաքներում՝ աննշան արժէքով: Վանքի  
ժառան ցոյց տուեց ինձ մի ահագին  
կոյտ պղնձեայ դրամների, որոնք դրե-  
թէ իսպառ անցել և փոշիացել էին:

Հայր սուրբը ցոյց տուեց ինձ իւր  
սեպհական Աւետարանը (20)՝ փրկչա-  
կան և Հայոց 650 թուականին մի Յով-  
հաննէսի ձեռք գրուած յճխ, փայ-  
տակալ, ոսկեգոյն նկարներով, բառա-  
կան հասարակ կոպիտ մարտաթիւց, հա-  
մարեա 12 վերջա՝ երկարութեամբ  
և 7 կամ 8 վերջոյ լոյսութեամբ, եր-  
կաթագիր, որ և սորանից 300 տարի  
առաջ վերակաղմուած է եղել Տանձ-  
տեցի Յովհան Երեցի ձեռքով, և նուի-  
րած է եղել Սրբոց կոստանդինոսի և  
Գրիգորի եկեղեցիներին, թէ մը տեղի՝  
յայտնի չէ. ունի մի քանի ոչ այնքան  
նշանաւոր յիշատակարաններ և վկայ-  
ութիւնք նուիրատուութեանց:

Հայր սուրբի հետ ես շատ խօսեցայ  
թէ միաբանութեան նեղ և դառն վի-  
ճակը բարելաւելու և թէ փոքրաւեր շի-  
նութիւնքը վաղորով ամրացնելու մա-  
սին. նա բոլորովին տփփոհ իւր վիճա-  
կից, գանգատվում էր ընդհանրապէս  
Հայ աղջի և մասնաւորապէս շրջապա-  
տող հասարակութեանց անտարբերու-  
թեանը. սակայն այս իմ խորհուրդն  
էր, գէթ շատերից՝ միայն կադրանիաէ  
թագուհու և Սմբատ Տիեզերակալի յի-  
շատակը՝ կաթողիկէ եկեղեցին՝ այս ա-  
ւուր գիրքով ապագայ սերնդեան  
ձեռք յանձնելու համար, անպատճառ  
հնարաւոր միջոցները 'ի դործ գնել նո-

1 Մէկ վերջոյ է 0, 04 մեդրի:

րան կանգուն պահելու. կարկատել ձեզքուած տեղերը, նստացւնել իրենց տեղերում՝ թափուած քարերը, կազմել միաբաններին (պահապանաց) մի ուժեղ խումբ, պարսպով պատել գոցա բնակարանը, և կառավարութիւնից արդէն յանձնուած 100 օրավար արգաւանդ հողը մշակելու համար՝ բնակեցնել այնտեղ երեք չորս տուն Հայ դիւզացիներ: Հակառակ դէպքում՝ սալարդիւն են բոլոր աշխատութիւնք՝ պայծառացնելու եկեղեցին (Ս. Դուսաւորիչը). որովհետեւ դեռ անցեալ 1882 թուի նման, օրը ցերեկով կը թալանեն դորան, և 1883 թուի, այս ժամանակում տեղի ունեցող չարագործութեան պէս՝ իսպառսպուռ աւարի կ'առնեն բոլորը՝ ինչ որ վանքին ու վանականներին են: Վարդապետը ցաւելով պատմեց՝ որ բացի 17 կամ 18 տուն Տաճիկ Անցի գիւղացիներից, քանզում և տանում են աւերակների քարերից նաև շրջակայ Հայ գիւղացիներ. Մավրակցին, կարմիր-վանքին, Արազի գիւղացին, և այլն, և այլն . . . :

Թէ և իմ օրտի փափագն էր նկարել Ալաճա լեռը, որ Անիի արևմտակողմն է, Եահնին, Նախրճի — թափան և իւշ-թէփէքը, որ Ալաճայի հետ դէպ'ի հիւսիս շրջալի օղակների նման շարուած են կարգով, սակայն բայ 'ի եղանակի վատութիւնը, շատ հետու լինելով՝ Անույ բարձրաբերձ պարսպների քամակից՝ այնքան փոքր էին երևում, որ տեսնողը նոցա բնդհանուր գիրքը (և մանաւանդ վերջին ուսու-թըրական պատերազմի ժամանակ նոցա վերայի ելէ էջները, հողէ պատնէշները, և այլն), անկարելի էր նկարել: Շատ ցաւելով որ կամայ ակամայ պարտաւորուած էինք թողնել մեր սիրելի Անին, առանց կատարելագէս իզձերս կատարուած գտնելու, մայիսի 17ին՝ կէս օրից յետոյ, ուղևորեցանք Հոռոմուսի վանքը, երկու ժամից յետոյ փոքրիկ ձորակի մէջ Ախուրեանի եզրը, զոյգ մանր եկեղեցիների մաս. ևս ծնկաչոք համբուրեցի իմ աննման Աշտի սրբազան

դամբարանը. մի կոշտ և ստուն մահարձան . . . մի զոյգ արտասուաց տան կաթիլներ. և հազ գոքա արտայայտող են մարդկային օրտի դառն թախիծներու . . . : Արտասուքով թրջեցի այն տառերը, որ մակաբերում են՝ Աշտ քաղաշոր խօսքը:

Մտանք վաւքի սրահով. տեղական վանահայրը՝ մի Յակոբ վ. Ախալցխացի՝ բացակայ էր վանքից. նա յանձնելով իւր իրաւասութիւնը ծառային, ինքը ուղևորել էր Աբաս — թուման, առողջութիւնը կազգուրելու: Այստեղի սրբավայրերը ես դտայ անմաքրութեան մէջ . . . : Երեք Հոռոմ կղերներից շինած (Ը դարում) տաճարի հետ՝ թերևս այլազգին, Հրէան էլ այնպէս չվարուէր, ինչպիսի գրութեան մէջ էր նա այսօր . . . :

Կարծես այդ սրբավայրերի զխով նոյնքան չար ու բարիք են անցել, որքան որ Յովհաննէս — Սմբատից մինչև Շիրակուսու արձակուելը . . . : Ո՛ր են եկեղեցու դրեանքն ու զարդարանքը, նորա հարստութիւնը, շրագացի արդիւնքը, Տայլարու՝ մտաւորապէս 700 օրավար հողն և սեպհական բան շարանցի եկամուտը, այցելուների և ուխտաւորաց առատ տուրքերը. ո՛ր, ո՛ւմ գրպանում դիզուեցան արդեօք այդ բոլորը . . . : Տեղական Տէր Շմաւան քահանան էլ վաղուց արդէն խոյս է տուել գիւղից . . . :

Վաղ առաւօտեան վերջապէս ցանկալով ձեռնամուխ լինել գործին, 'ի զուր ժամանակ էի պառում արևի ճառագայթներից օգտուելու. նա Ալաճայից մինչև Արագածի բարձրունքները ծածկուած էր թանձր քողով. մերթ աւերում էր յորդ անձրև, և մերթ մանրիկ կաթիլներով ցօզվում էր երկիրը. հազիւ թէ արևելեան կողմից մի ևեգաւտիլ ստացած, մի ամենակարևոր հանգամանք, մի դժբաղդութիւն, որի պարզելը աւելորդ եմ համարում, ստիպեց դուրս գնալ Հոռոմուսի պարսպներից: Անցանք մենք երկու միմեանց կից զբմբէթաձև շինութեան մօտից, որոց սու-

վորաբար կոչում են Խոշուռ կամ Ղուշէք. գա հնումն Անույ յաղթական դուռն է եղել, և իւր վերայ կրում է մի միայն այսքան արձանագիր.


«Քրիստոս ողորմի վարդա»:

Իրանլիում, ուր գիշերեցինք, լսեցի որ անցեալներում այդ գիւղի քարահանքում գտնուած է եղել մի հատ բնականի մեծութեամբ ոսկեայ աքաղաղ, և մի ձուլածոյ ոսկեխնձոր, որ Քրնակցի Մօլլայի սեպհականութիւնը լինելով՝ վաճառել է Ս. Էջմիածնի թանգարանին. բայց չգիտեմ թէ ինչու առհասարակ այդպիսի թանգազին հնութիւններ չեն երևում յիշեալ թանգարանում. միթէ անցնում են մասնաւոր անձանց ձեռք . . . :

Լսեցի նոյնպէս՝ որ 1883 թուին 'ի միջի այլոց, մի և նոյն քարահանքում մի

Աղերսանդրապօլցի գտել է վեց հատ պողպատեայ սրեր, առանց պատեանի և երախակալի, սրը՝ ըստ երևութին՝ փտել և փոշիացել են: Մի և նոյն տարին գտնուած է այդ տեղ մարդկային մի ամենամեծ գանկ՝ իսպառ քարացած, ձուր կեղևներ, անասնոց և մարդկանց քարացած ոսկորներ, և մի զոյգ երկաթի թէ պղնձի տախտակներ՝ սեպաձև տառերով:

Հետեալ օրը, 19 մայիսի, եղանակը դարձեալ ամպամած և մառախլապատ էր: Գետը (Ախուրեան) աւելի բարձրացած լինելով՝ մեզ աննկարագրելի դժուարութեամբ յաջողեցաւ անց կենալ միւս ափը: Սյլ ևս անկարող լինելով նկարել Շիրակաւանի, Արալըղի, Թիքնիզու և այլ տեղերի աւերակները, կէս օրից յետոյ՝ մենք արդէն Աղերսանդրապօլումն էինք:



Քանդակ կամողիկէին Անույ.

# Մ Ր Է Ն

Անհերքելի ճշմարտութիւն է, որ Հայաստանը մի պատմական երկիր է. նորա մէջ ամեն մի քայլափոխում նկատելի են հոյակապ և ճարտարարուեստ շինութիւնների կիսաքանդ և կիսակործան մնացորդները. հոյակապ դիրքով տեսնվում են տակաւին հրաշակերտ վանքերը, անառիկ ամրոցները, վիթխարի բուրգերը, գեղեցկաչէն պալատները և ամառ մարտկոցները. որոնք անկասկած կենդանի կոթողներ և շոչափելի վկաներ են Հայ ազգի մեծութեան, ճարտարապետութեան, ռազմագիտական հմտութեան, գոյութեան և ճշմարիտ քրիստոնէութեան. Հայ աշխարհի ամեն մի անշքացած բեկորը, մի կտոր մամուռապա քարը, մեր պատմութեան համար՝ ահադին գանձ և հարստութիւն է պարունակում իւր մէջ. . . : Անուրանալի է նաև, որ հայկական ճարտարապետութիւնը ծագիցաւ և իւր կատարելութեանը հասաւ Չ-ՉՍ դարերում, որ ժամանակ և բարձրացան Անիի բուրգերն ու պարիսպը, հոյակապ եկեղեցիքը, աշտարակներն ու պալատները, և այլն. որոնք և գերազանցեցին ժամանակակից բոլոր ճարտարապետական քանքարը և գիտութիւնը : . . .

Տասներորդ դարու նշանաւոր շինութիւններից մէկն էլ է Մրեն, իւր գլմբէթաւոր եկեղեցիով, կանոնաւոր բնակարաններով, պալատներով, բարգերով, դարպասներով, և այլն :


Մրենը Բագրատունի թագաւորաց գեղեցիկ ամարանոց կամ թերևս աշնանոցն էր. դա գտանվում է Շիրակի գաւառումը, Անի մայրաքաղաքից զբթթէ 7-8 ժամի ճանապարհ հեռաւորութեամբ, նորա արևմտ-հարաւային կողմում :

Մրենը գրուած է մի լայնածաւալ դաշտի կենդրոնում. տարածութիւնը կարելի է 20 քառակուսի մղոն համարել : Երկու՝ արևելա-և-արևմտ-հարաւային կողմերում՝ անդնդախոր և ժայռախիտ ձորեր կան, որոնց առաջինի միջից՝ ահադին շառաչւնով անցնում է փոքրագէջ Ախուրեանը. իսկ երկրորդից՝ ինձկոնից ուխտի քաղցրահամ առուակը՝ իւր մեղմ պղպղակներով, որ թափվում է Ախուրեանի ծոցը : Հեռուից հսկայական դիրքով նշատած՝ երևում է Հայաստանի ալեգարդ թագուհին, Մասիսը, իւր ձիւնապատ գագաթով :


Դաշտի գրեթէ կենդրոնում գրուած է գիւղը, իւր սխրալի շինութեանց կիսաւեր մնացորդներով, բնակարանների քայքայուած որմերով, և ամայացած ու անապատացած այգիների կիսակործան շրջապատներով, որոց մէջտեղում հրաշակերտ եկեղեցին իբրև մի այրի՝ զրկուած իւր բոլոր պաճուճանքներից, կարճես, արտասուք աչքերին՝ յիշելով մեծ և փառաւոր անցեալը՝ ողբում է աղետալի ներկան : . . .

Այդ սրբութեան գեղեցկաչէն տաճարը, որ կառուցել է Գաբիթ Սահառուին 614 թուականում, կաթողիկէ եկեղեցի անունով, իւր զմայլեցուցիչ ճարտարապետութեամբ, սրանչելի փորուածքներով, քանդակներով ու մանուածքներով, մասամբ պատկերացրնում է Տեկոսի եկեղեցին, կամ ըստ մեծի մասին՝ Տայլարի մենաստանը : Արևմտեան որմը՝ մի քանի արշին բարձրութեամբ թաղուած է հողի և

Կաթողիկէն, Արևմտեան կողմն



Կաթողիկէն, Հիւսիսային կողմն



Մ Ր Է Ն

քարի շեղջերի մէջ, որտեղից և դասն վում է եկեղեցու առաջին մուտքը. այս դուռը քառակուսի դիրք ունի. անցքը, կամ ինչպէս սովորաբար ասում են, ճակատը (Ե. 9) զարդարուած է զըրեթէ մէկ արշինաչափ բարձրութեամբ 5 հատ ուռուցիկ արձաններով, որոնցից մէջ անդի երեքը պատկերացնում են 3 աւետարանիչներին, որոնք բռնած ունին Աստուծոյ խօսքերը, իսկ երկու անջ և ձախ կողմերի արձանները թերևս հրեշտակներ լինին, որոնք մատնանիչ լինելով դէպի փրկչի աշակերտները՝ պատուիրում են հնազանդուել Աստուծոյ խօսքերին: Սոցա բարձրը, կիսաքանդ կամարի ներքև շինուած են երկու աւելի մեծ և բարձր արձաններ, (Ե. 10). զոքա թուշունի պէս թևեր ունին. անջ և ձախ կողմերին զբաժ, որ հպատակութեան և խոնարհութեան յատկանիչն է, թերևս արթնում են էկեղեցականների համար և պահպանում են նոցա: Ինչպէս ասացինք, այս երկու հրեշտակների բարձրով՝ անցնում է դռան կիսաբոլոր շրջանակը նեղ և սրանկիւն շերտերով, որի վերայ քանդակուած կան խաղողի լայն տերևներ ուռուցիկ սղկոյզներով:

Այս մուտքի հիւսիսային և հարաւային կողմերում գրուած են մի մի հատ նեղ և երկար պատուհաններ, որոնցից հիւսիսայինի բարձրը քանդակուած կայ մի շարք գեղեցկահիւս խաչարձանների, իսկ դոցա բարձրը մի ուրիշ խաչարձան քառակուսի դիրքով և գեղեցիկ քանդակներով: Հարաւային պատուհանի բարձրից անցնում է քանդակագործ կամարը, որի ձախ կողմում գրուած են երեք կարգ և թուով 11 հատ խաչարձաններ:

Դռան բարձրը, եկեղեցու ուղիղ կենդրոնում, գտանվում է մի ուրիշ աւելի մեծ և երկար պատուհան կիսաբոլոր, քանդակագործ կամարով: Որ մի բոլոր կատարներովը անցնում է քանդակագործ դռանիզէ (corniche), որը անգութ մարդիկների և մասամբ բնութեան հարուածներից անել անել

մաշուել և կործանուել է: Այս պատի երկարութիւնը 30 արշին է:

Հիւսիսային որմը փոքր ինչ նմանում է այս պատին, ունի չորս պատուհաններ և մէկ դուռ. պատուհաններից մէկը գտանվում է դռան բարձրում, որ քանդակագործ շրջանակով խաչաձև դիրք ունի. դորա բարձրը գրուած է մեծ և երկար պատուհանը քանդակագործ լայն շրջանակով. մնացեալ երկու պատուհանները գրուած են խաչաձև լուսամտափ անջ և ձախ կողմերում: Այս կողմից մուտքը նոյնպէս քառակուսի է, որի ճակատին զըրոշմուած կան, գրեթէ մէկ արշին բարձրութեամբ՝ հինգ հատ ուռուցիկ արձաններ. դոցանից արևելեան կողմինը մի ձի է (Ե. 10), բայց հիւսած, թամբը մէջքին և սանձը բերանում. սորա առջև կանգնած է արձակ զգեստով լայն մանթիան ուսին, գլուխը փաթած, լայն վարախքով մի բարձրահասակ մարդ, որ և բռնած ունի երկար ու անպաճոյճ խաչը. սորա հանդէպ ծնկի չոքած՝ գտանվում է մի այլ մարդի արձան, որը նոյնպէս բռնած է խաչը. իսկ այս վերջինի ձախ կողմից խնկարկում է խաչին մի բարձրահասակ հոգևորական, որ ոլորուն ընչացքով կարճ մծրուք ունի. սորա մտ կանգնած կայ եօթն ճիւղերի բաժանուած երեքական հատ լայն տերևներով մի կոպիտ ծառ: Որմի կատարները աւելի փաստուած են և սրբատաշ քարերից ու քանդակագործ գոտնիզներից գրեթէ իսպառ մերկացած:

Հարաւային որմը 40 արշին երկայնութիւն ունի և նմանում է հիւսիսային պատին. սոցա մէջ կայ այն զանազանութիւնը միայն, որ այստեղ փոխանակ չորսի՝ երկու պատուհաններ կան, և 16 հատ խաչարձաններ. դուռը որմի ձախ ծայրիցն է, որը այժմ չարուած է մանր քարերով, և անդ անդ էլ ծածկուած է հողի ու քարի կոյտերով:

Դռան կամարի ներքև քանդակուած կայ մի քառաթև խաչ բոլորչի և ծաղ-

կանկար չըջանալով: Արևմտեան ծայրից՝ գրեթէ 1 1/2 արշինաչափ լայնութեամբ այս պատը, անդ անդ էլ բուրովին կործանուել է ու բացուել է: Պատի կատարները գրեթէ բոլորովին մերկացել են քանդակագործ գունիչներից, և մասամբ՝ կոփածոյ քարերից:

Արևելեան որմը ճիշտ Տեկոսի արևելեան պատն է ներկայացընում. բազկացած է 7 հարթ մասերից կամ 8 անկիւններից, որոց մէջ տեղի 3 մասերը, որ սեղանի արտաքին կողմն է, անելի դուրս են միւսներից. որանց կից աջ և ձախ եռանկիւնի դիրքով թերվում են գէպի ներս միւս երկու մասերը, որոնք և միաւորում են երկու ծայրերի հարթ և լայն մասերի հետ: Կենդրոնի 5 մասերի վերայով անց է կենում քանդակագործ գոտին, որի ներքև՝ դուրս եկած երեք մասերի մէջ՝ դրուած են 3 պատուհաններ, իրենց քանդակագործ շրջանակներով: Որմնի զոյգ ծայրերում գտանուող երկու հարթ մասերի վերայ էլ դրուած կան մի մի հատ փոքրիկ, նեղ և երկար պատուհաններ, որոնք խսկապէս ծառայում են խորանները լուսաւորելու. աջ պատուհանի բարձրը քանդակուած կան զոյգ վիշապներ, որ փաթաթուելով միմեանց՝ կազմում են պատուհանի կիսարտրոակ շրջանակը. ձախ պատուհանի բարձրը գտանվում է մի անասկ նոյնպէս գալարուն արձան, որ աղաւաղուած և կուտրտուած լինելու առթիւ, ինչ լինելը որոշ կերպով ասելու ես հրաժարվում եմ:

Այս պատի վերայ, սակաւ ինչ ներսով դրուած է մի ուրիշ որմ, որի գաղաթը եռանկիւնաձև ու գմբէթանման է. կենդրոնում գտանվում է քառակուսի և քանդակագործ շրջանակով մի մեծ պատուհան. դորա կամարի բարձրով անցնում է զեղեցիկ փորուածքներով զարդարուն գոտնիզը, որ տակաւին մնում է անխախտ և անեղծ դրութեամբ:

Չորս պատերից դադարթներն էլ ներ-

կայացնում են չորս հատ առանձին և ուանկիւնաձև գմբէթներ, որոնք եկեղեցուն մի անասկ օրորոցի կերպարանք են տալիս. զոցա վերայ՝ արտաքին շքեղութեան համար ձգուած են եղել նեղ և երկար շերտերը, որոնք այժմ զոհուել են մաշող բնութեան և աւերիչ մարդկանց հարուածներին:

Չեղունի վերայից բարձրանում է ութ անկիւնակի կաթողիկէն իւր կոնաձև և ութ հարթ մասերից բաղկացած գմբէթով: Կաթողիկէն մնում է գրեթէ բոլորովին նոր դրութեամբ. ունի չորս հատ միմեանց համանման դեղեցիկ ներդաշնակութեամբ քանդակագործուած կամարակապ պատուհաններ, որոց վերայով անցնում է վերին մասի ծաղկանկար գոտին կամ զարդարուն գոտնիզը:


Գմբէթի վերայ ձգուած են՝ աղիւսներից միմեանց վերայ դարսուած բազմաձալ շերտերը, որ տեղ անդ կուտրտուած և խախտուած լինելով՝ մասամբ ծածկուած են կանաչ մամուռով:

Եկեղեցին հաստատուած է արտաքուստ կոփածոյ կարմիր և սև, իսկ ներքուստ՝ թուխ, կարմիր և դորշ աւելի կարծր քարերով:

Ներքի կողմից կաթողիկէ եկեղեցին նոյնպէս քառակուսի դիրք ունի, երկու բաւականի մեծ կակ խորաններով, և սեղանի ներքևում գտանվող կամարակապ պահարանով. կենդրոնում դրուած է հատ վիթխարի և բազմախորշ սիւների կատարներին՝ ամրացած են լայն և բազմաձալ վերնախարիսխները, որոց վերայ յենուած են մանեկաձև շրջապատների ծայրերը. դոքա բարձրանալով կազմում են մի բոլորակ գոտի, որ է կաթողիկէի պատուանդանը:

Այս կողմից՝ եկեղեցու կաթողիկէն նոյնպէս ութը հարթ մասերի կամ անկիւնների է բաժանվում. գմբէթը զարդարուած է 16 հատ գրեթէ երեքական վերջօք լայնութեամբ տափարակ շերտերով, որոնք հաստատուած են կարմիր և դորշ կոփածոյ քարերից:

Հարաւային և արևմտեան որմերի




Մ Բ Ե Ն

Ե



Քանդակը արեւմտեան դռան կամօղիկէին



Քանդակը հարաւային դռան կամօղիկէին

ճակատներին քանդակուած կան թը-  
ւով 42 հաս մանր և խոշոր խաչարձան-  
ներ, գոքա փորուած են կարմիր քա-  
րերի վերայ զմայլեցուցիչ նկարներով:  
Որմերը մի ժամանակ ծածկուած են  
եղել ներկուած պատկերներով և սև  
մակազրութեամբ, որոց աննշան հեա-  
քերը միայն նկատելի են այսօր:

Ունի ընդ ամենը 12 կտոր արձանա-  
զրութիւնք, որոնք զրոշմուած են ար-  
տաքին կողմում, արևմտեան և հարա-  
ւային որմերին:

Առաջինը՝ փորագրուած է արևմը-  
տեան պատի վերայ, դռան ձախ կող-  
մում Նխ թուականին, որից երևում  
է, որ մի վարդայ որդի Դաւիթ անու-  
նով մարդ, իւր գետեգրը ունեցած այ-  
գին ընծայել է կաթողիկէին, պար-  
տաւորացներով եկեղեցականաց՝ մինչև  
միւս անգամ Քրիստոսի գալուստը,  
բարեկենդանի ուրբաթ օրերին իւր ա-  
նուանը պատարագ մատուցանել այս  
բանի խափանող կամ յափշտակողնե-  
րին անիծում է, իսկ ճշտութեամբ կա-  
տարողներին մաղթում է Աստուծոյ և  
բոլոր սրբերի օրհնութիւնը:

Երկրորդը, կից է սորան, որով Շա-  
հանշահ Աշոտի գուստրը, Սոփիայ Հայ-  
ոց և վրաց թագուհին, տուել է և  
հաստատել Դաւիթի այգին սուրբ կա-  
թողիկէի՝ Տէր-Սահակի ձեռք, Դաւիթի  
հօգու փրկութեան և իւր ու Գագիկ  
Շահանշահի արեւշատութեանը համար.  
յափշտակել ջանացողին զրկում է Աս-  
տուծոյ « բանէն » . իսկ հրամանակա-  
տարներին Աստուծոյ օրհնութեանն է  
արժանացնում:

Երրորդը, մակազրուած է նոյն որմի  
վերայ, որից երևում է, որ Տէր-Սա-  
հակ Արշարունեանց եպիսկոպոսի խըն-  
դրանաց համաձայն՝ Գագիկ Շահան-  
շահը ազատել է Մրէնի մարդու և եղի  
կողը. Տէր-Սահակը պէտք է առանց  
մտածանալու՝ փրկչից նորա մեղքերին  
թողութիւն խնդրէ: Ով որ այս հրա-  
մանին, թէ իւր որդիքներից և թէ օ-  
տարներից, ընդդիմանայ իւր ազգի  
մեղաց և Քրիստոսի արեանը պարտա-

կան կը լինի. իսկ կատարողներին՝ օրհ-  
նում է:

Չորրորդը, գրուած է սորա ներքև  
խոշոր տառերով.

« Վահան քանանայ գծող »:

Հինգերորդը, սորա ներքևումն է ՆՂ  
թուականին մակազրուած՝ Տէր-Պե-  
տրոսի և Տէր-Խաչիկ Հայոց կաթողի-  
կոսների հայրապետութեան ժամա-  
նակ, որ Աշոտի որդի Գագիկ Շահան-  
շահի հրամանն է, ազատել Մրէնի  
հարկը « զծուծ և մրուր, զկապիճքն... »  
կատարողներին օրհնում է, իսկ հա-  
կառակողներին ՅԺԸ հայրապետների  
նզովքին է ենթարկում:

Վեցերորդը, սորա ներքևումն է խո-  
շոր տառերով.

« Ի ՅԱրեւմեան Տոմսիս տոմարիս եւ Թը-  
վին 'ի ՇԺԲ ամսաց... »:

Եօթներորդը, հարաւային որմի վրայ  
է Չ թուականով, կոստանդեայ Հայոց  
կաթողիկոսի հայրապետութեան և  
Տէր-Գրիգորի առաջնորդութեան ժա-  
մանակ, Շահանշահի հրամանօքը զը-  
րուած. որով խառն արդելվում է ե-  
պիսկոպոսներին առանց ընտրութեան  
— կաշառքով — ( թէ ինչ առնել եղ-  
ծուած է ) . զիրը ջնջողին անիծում է  
այսպէս.

« Ջնջի 'ի կենաց գրոյն »:

Ութերորդը, նոյն որմի վերայ է, ՉԻԲ  
թուականով, որից երևում է, որ մի  
պարոն Սահմատին անուշով մարդ, ա-  
զատել է սուրբ ուխտի Արժվան, Մրէն  
և Աւշականում ունեցած այգիքն հար-  
կից և ուրիշի ձեռքերից մինչև « Ի ծա-  
գումն Քրիստոսի »:

Իններորդը, հարաւային որմի վերայ  
է ՉԼԳ թուականին զրոշմուած, և պատ-  
կանում է Աւետեց որդի Պարոն Սե-  
նապ Սահմատինին և նորա կենակից  
Ուրգուրիտայ տիկնոջը, որոնք թողել  
են « տանակն հացին » շարիաթը, իւ-  
րեանց և որդւոցը արեւաշատութեան  
յիշատակ և մեղքերի թողութեան.

մշտեն շնոր մակագրութեանս խա-  
փանել ջանացողին անիծում են, պար-  
տական անելով նորան փրկչի սպանման  
արինով և սատանայի դատաստանով,  
իսկ հաստատ պահողներին օրհնում  
են: Սորան կից է հետևեալը.

« Կիկիչանայ ամիրութեամբս գրեցաւ »:

Տասներորդը փորագրուած է միևնոյն  
պատի վերայ ՉԼԷ թուականին ( հայ-  
կական ), որ յիշելով Աստուծոյ ա-  
նունը և երկնային ու երկրային զօրու-  
թեան միջնորդութիւնը, Պարոն Աէ-  
նապ Սահմատին և նորա ամուսին Ուր-  
զուրիտան՝ իւրեանց մեղքերի փրկու-  
թեան և օրդոցը երկար կենդանու-  
թեան համար, թողել են Մրէնի հա-  
յի շարիաթը, այգիների գինը և խա-  
ղողի խալէն, որ ոչոք չըխառնէ. խա-  
փանողներին ենթարկում է Աստու-  
ծոյ և ՅԺԸ հայրապետների նշովքին:

Մետասաներորդը գրոշմուած է խա-  
խաչարձանի ներքև հետևեալ խօսքե-  
րով.

« Ո՛վ սուրբ խաչ Փրկական եւ ներկեալ  
արեամբ Որդոյն Աստուծոյ, ի քեզ ապաւի-  
նեցաք ծառայքս խաչելոյն Քրիստոսի եւ  
Մարտիրոս եւ ամուսին իմ վարդուտս եւ  
նարագատ որդիք մեր Փարսամ՝ն հմաէ: . . .  
ՍԳս քահանայ եւ քոյր մեր Դճին կանգնե-  
ցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնողաց մե-  
րոց եւ զաւակաց մերոց, արդ աղաչեմք »:

Երկուստասներորդը նոյն օրմի վերայ  
է, ՉԻՉ թուականին, Տէր - Յակովբի  
հայրապետութեան, լեռնի թաղաու-  
թութեան և Սահմատինի պարոնու-  
թեան ժամանակ փորագրուած, որ  
պարտք է գրվում ( թերեւս պատա-  
րագի մէջ ), խորանի վերանորոգող  
Մխ . . . ( գուցէ Մխիթար ) վարդա-  
պետի և նորան օգնողներին յիշել:  
Այս մակագրութիւնքը ճշտութեամբ  
օրինակուած կան միայն Հ. Ներսէս  
Սարգիսեանի « Տեղեկագիր Հայոց մե-  
ծաց » ճանապարհորդութեան մէջ:

Այս եկեղեցին տեղի յարմարու-  
թեան առթիւ, մինչև 1877-1878 թուի  
ուստաճկական պատերազմի ժամա-  
նակ, Մրէնում ձմեռանոց եկող ( զըչ-


լայ ) քիւրդ խաչնարածներին ճառա-  
յելիս է եղել անասնոց, մանաւանդ  
օչխարների բնակարանի տեղ, ուր դի-  
զուած էր ահագին բարձրութեամբ  
գարշելի անմաքրութիւնք, հողի ու  
քարի շեղջերը, որոնք թէև 1879 թուին  
տեղական հայազն գաւառապետի ա-  
ռաջարկութեամբ մաքրուած է եղել,  
բայց ափսոս, որ այդ անմաքրութիւնքը  
գիզուած են կաթողիկէի արևմտեան  
և հարաւային սրմերի առջև, որոց մէջ  
և սրբութեան տաճարը թաղուած է մի  
քանի արշին խորութեամբ: . . .

Կաթողիկէ եկեղեցու արևելեան և  
հարաւային կողմերում գրուած են ե-  
ղել զիւզի բնակարանները, որոնք մօ-  
տաւորապէս կարելի է 500 տուն հա-  
շուել. դոցա մէջ, տեղ տեղ նկատելի  
են Բաղրատունի թաղաւորների և մե-  
ծամեծաց բնակարանների մնացորդնե-  
րը, ուր 900 թուականներում՝ Անի քա-  
ղաքից, զանազան ամարանոցներից և  
աւաններից աշնան ժամանակ տեղա-  
փոխուելիս են եղել նոքա:

Եկեղեցուց մի քանի հարիւրաւոր  
քայլափոխ հեռաւորութեամբ կանգ-  
նած կայ մի մեծ շինութեան հետք  
կամ մնացորդ. դա իւր զմայլեցուցիչ  
նկարներով, մանր, խոշոր և բազմատե-  
սակ քանդակներով գրաւում է այցե-  
լուի բոլոր ուշադրութիւնը. դոքա ա-  
կամայից յիշեցընել են տալիս փառա-  
ւոր անցեալի գեղեցիկ պատկերը . . .  
կարծես այդ գիտկացած բեկորներից  
պիտի դիմաւորեն քեզ Արամազդի սր-  
դէքը - Հայոց քաջերը - . . .


Այդ կիսաւեր սրմը՝ որ հաստա-  
տուած է կարմիր քարերով շինութեան  
արևմտեան պատն է. բարձրացած է  
մի քանի կարգ աստիճանների վերայ.  
արտաքին երեսը ամբողջապէս կազ-  
մուած է խիտ քանդակներից. երեք  
քառակուսի խորշերի վերայով անց-  
նում են երկու կարգ ծաղկանկար գու-  
նիզներ, որոց վերայ գրուած են թը-  
ւով վեց հատ խաչարձանները. դոցա-  
նից աջակողմեանը գրեթէ 2 1/2 արշին  
բարձրութիւն ունի, և դտանվում է

2



Խաչքանդակ / Այսպիսի Մրճնայ

Մրճն



Դուռն Այսպիսից Մրճնայ

քանդակագործ չրջանակի մէջ: Խաչի պատուանդանը ներկայացնում է մի ուրիշ քառակուսի խաչ: Այս քնարածն խաչարձանի բարձրը միևնոյն քարի ճակատին՝ կարգով շարուած կան ուրիշ հինգ հատ խաչեր: Մորա մօտ դըտանվում է երկրորդ խաչարձանը՝ միևնոյն բարձրութեամբ. շտկվում է առաջինից այն զանազանութեամբ միայն, որ այստեղ խաչը քնարածն չէ, և նորա բոլորակ պատուանդանը կազմուած է մի խումբ ամենամանր խաչարձաններից: (Չ. 12): Մորան կից են միւս չորս խաչերը, որոնք յար և նման են միմեանց, միաչափ հաւասար մեծութեամբ և միատեսակ քանդակներով: Գոցանից երկուսը դրուած են ներքի և երկուսն էլ վերին կողմերում, առանց կլորակ պատուանդանի, քառակուսի դիրքով քանդակագործ չրջանակների մէջ զետեղուած: Խաչերը առհասարակ զարդարուած են ծաղկանկար և գալարուն, կիսաբոլոր ու քառակուսի մանր քանդակներով: Ներքուստ որմը շարուած է կարմիր կոփածոց քարերով, հարթ և հաւասար դրութեամբ: Տեղագծին նայելով՝ սա մի բաւականի մեծ բնակարան, կամ թերևս եկեղեցական մի նշանաւոր շինութիւն է եղել մի յարկից բաղկացած: Այս մնացորդի նոր և անաղարա դրութիւնից կարելի է եզրակացնել, որ բնութիւնը իսպառ չէ մասնակցել դորա կործանմանը, այլ անդուծ մարդիկների կործանիչ ձեռքերը բնաջինջ են արել դորան: . . .

Այս աւերակին չրջակայ գիւղերի թէ Հայ և թէ մահմեդական բնակիչները աւանդութեան հետեւելով «Ղարա - քեօխլի» պալատ են անուանում, ասելով, որ իբրև սկզբում այդ տեղ բնակուելիս է եղել «Ղարա» անունով տեղական գիւղաւաղը:

Մորանից սակաւ ինչ հեռու հարաւային բնակարանների կենդրոնում, քարի և հողի շեղջերի մէջ կանգուն կան երկու կտոր ուրիշ շինութեանց բեկորներ, որոնք հաստատուած են կարմիր


քարերով, տեղ տեղ զմայլեցուցիչ նկարներով և քանդակներով զարդարուած: Գոցանից մէկը որ դռան նմանութիւն ունի, «Վարդան քեօխլի դարպաս» է կոչվում, իսկ երկրորդը՝ հաւանական է դիտանոց կամ բուրգի մնացորդ կարծել:

Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան և հիւսիսային կողմերով, ըստ մեծի մասին դրուած են այգիները, որոնք կարելի է թուով աւելի քան 1200 համարել: Բոլորն էլ պատած են ցածրիկ, բայց քարեայ ամուր չրջապատերով այգիների մէջ տակաւին դտանվում են՝ աննշան քանակութեամբ՝ վայրենացած պտղատու ծառեր. իսկ քարախիտ ձորակում՝ բուսնում է բաւականի համեղ խաղող: Այգիներից շատերի մէջ եւս պատահեցայ 2-6 հատ մանր և խոշոր տապանաքարերի, և մի քանի տեղ էլ գինու հնձանների: Գիւղը ուրիշ տեղ գերեզմանատուն չէ ունեցել:

Մրէնը ընկնելով կողքի և կաղղուանի աղահանքերի գրեթէ մէջ տեղում, չափազանց չու (աղի) հող ունի, և զուրկ է թէ վազող և թէ բլրուող ջրերից, որից հետևում է և այն կարծիքը՝ թէ ջրի պակասութեան առթիւ աւերուել է այդ պատուական և մարդաշատ աւանը: Դորա միջից մի ժամանակ հոսելիս է եղել Խնձկօնից ուխտի փոքրիկ գետակը, որը վազուց արդէն ընկնելով իւր բնական ճանապարհը՝ ոռոգում է Մեծ - Մավրակի դաշտերը և յագեցնում է երեք քիւրդական ամաւանոցների ժողովրդեանը և անասուններին: Կլիման չափազանց տաք է և վնասակար:

Մրէն իւր բոլոր հողերով և անգամ սրբութեան տաճարով, բնակարանների մնացորդներով և ճարտարուեստ խաչարձանների գեղեցիկ հիւսուածքներով, պատկանում է քիւրդ ֆթօբէգի որդի Բիշար - աղին, որի մահուան պատճառով այժմ օգտվում է նորա կինը, ստանալով քիւրդ խաչնարածներից վճար, տարեկան 55 ոսկի օսմանեան լիրա (500 ուրլի):





Հակատ Կամոդիկէին Մուկյ.

« Ազգային գրադարան



NL0255346

